

Հաստատված է

ԵՊՀ Գիտական Խորհրդի

2014թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,

Ա.Հ. Միմոնյան

## **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

**ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտահետազոտական և կրթական կառուցվածքային ստորաբաժանում է:
- 1.2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Կենտրոնի լրիվ անվանումն է՝  
Հայերեն՝ «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոն»  
Ռուսերեն՝ «Центр превосходства прикладной биологии»  
Անգլերեն՝ «Center of Excellence for Applied Biosciences»
- 1.4. Կենտրոնն ունի դրոշմակնիք, ձևաթուղթ՝ ԵՊՀ և իր խորհրդանշաններով:
- 1.5. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում են Կենտրոնի Խորհրդի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.6. Կենտրոնի հասցեն է՝ ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:

## 2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնի առաքելությունն է կենսաբանական գիտությունների ոլորտում դառնալ առաջատար կառույց՝ առաջարկելով հետազոտական բաղադրիչով ինտեգրված ճկուն գիտահենք կրթական ծրագրեր, իրականացնել մագիստրոսական նոր տիպի կրթական ծրագրեր, որոնք ապահովում են ակադեմիական ոլորտում կարիերան շարունակող «մագիստրոս հետազոտողի» և տնտեսության պահանջներին բավարարող «արտադրական մագիստրոսների» պատրաստումը, իրականացնել միջազգային հետազոտական չափանիշներին բավարարող մրցունակ հիմնարար ու կիրառական ուղղվածության հետազոտություններ՝ ազգային և միջազգային առաջատար հետազոտական կենտրոնների ներգրավմամբ:

## **2.1. Կենտրոնի նպատակներն են.**

- 2.1.1. կիրառական կենսաբանության և հնագիտության ժամանակակից ոլորտներում կրթական և հետազոտական ներուժի հզորացումը և շարունակականության ապահովումը,
- 2.1.2. միջազգային և միջառարկայական համագործակցության հարթակի ձևավորումը:

## **2.2. Կենտրոնի խնդիրներն են.**

- 2.2.1. Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս գործող շահագրգիռ կազմակերպությունների՝ ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, ձեռնարկությունների և ֆիզիկական անձանց հետ համատեղ նորարարական կրթական և հետազոտական ծրագրերի մշակումը և իրականացումը,
- 2.2.2. միջազգային հետազոտական չափանիշներին համապատասխանող հիմնարար ու կիրառական ուղղվածության հետազոտությունների իրականացումը՝ կիրառական կենսաբանության և կենսահնագիտության ոլորտներում,
- 2.2.3. միջառարկայական ուսումնասիրությունների խթանումը և դրանցում արդիական ու նորարարական հետազոտական մոտեցումների և սարքավորումների կիրառումը,
- 2.2.4. մրցունակ մասնագետների պատրաստումը արտադրության և գիտության ոլորտների համար՝ «Կիրառական կենսաբանություն» արտադրական և «Կենսահնագիտություն» հետազոտական մագիստրոսական կրթական ծրագրերով:

## **2.3. Կենտրոնի գործառույթներն են.**

- 2.3.1. Կիրառական կենսաբանության, կենսահնագիտության ոլորտներում աշխատող մասնագետների համար տեսական և գործնական կարճաժամկետ վերապատրաստումների իրականացում,
- 2.3.2. գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպում՝ ուղղված կիրառական կենսաբանության և կենսահնագիտության

- ոլորտներում՝ գիտության, կրթության և նորարարության միահյուսմանը և զարգացմանը,
- 2.3.3. կենտրոնի կառուցվածքում գործող լաբորատորիաների շարունակական վերազինում սարքավորումներով, մասնագիտական գրադարանի հագեցվածության և էլեկտրոնային ռեսուրսների ապահովում,
- 2.3.4. կիրառական կենսաբանության և կենսահնագիտության ոլորտներում հետազոտական զեկույցների, մենագրությունների, մասնագիտական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և այլ նյութերի պատրաստում և հրատարակում,
- 2.3.5. սույն կանոնադրությամբ Կենտրոնի առջև դրված նպատակների առավել արդյունավետ իրականացման համար լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում՝ դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության, դրամաշնորհային ծրագրերի մշակման և իրականացման, շահագրգիռ կազմակերպություններին՝ կրթական և հետազոտական պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման միջոցով,
- 2.3.6. Կենտրոնն իրականացնում է նաև իր կանոնադրական նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառույթներ:

### **3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

#### **3.1. Կենտրոնի կառուցվածքը.**

3.1.1. Կենտրոնի կազմում գործում են հետազոտական և ուսումնական լաբորատորիաներ և գրադարան:

Կենտրոնի լաբորատորիաներն են՝

- Ժամանակակից և հնագույն ԴՆԹ-ի գենոմային հետազոտությունների և NGS սեքվենավորման լաբորատորիան,
- Միկրոսկոպիայի և ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի լաբորատորիան,
- Հյուսվածքային կուլտուրաների լաբորատորիան:

### **3.2. Կենտրոնի կառավարումը**

3.2.1. Կենտրոնի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, և սույն կանոնադրությանը համապատասխան:

3.2.2. Կենտրոնի կառավարումը հիմնված է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գուգակցման վրա:

3.2.3. Կենտրոնի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնի Խորհուրդն է, որի կազմը հաստատում է ԵՊՀ ռեկտորը:

3.2.4. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, ով իր իրավասության սահմաններում և սույն կանոնադրությանը համապատասխան գործում է միանձնյա և պատասխանատվություն է կրում Կենտրոնի գործունեության համար:

### **3.3. Կենտրոնի Խորհուրդը և կազմավորման կարգը**

3.3.1. Կենտրոնի Խորհուրդը Կենտրոնի կոլեգիալ կառավարման մարմինն է:

3.3.2. Խորհուրդը քննարկում է ուսումնամեթոդական և գիտամեթոդական հարցերը՝ ուղղված կենտրոնի գիտակրթական գործունեության արդյունավետության ապահովմանը:

3.3.3. Կենտրոնի Խորհուրդը բաղկացած է 15 անդամից:

3.3.4. Խորհրդի կազմում ընդգրկվում են Կենտրոնի տնօրենը, կենտրոնի 3 մասնագետ, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկանը, Կենսաբանության ֆակուլտետի «Էկոլոգիայի և բնության պահպանության» ու «Գենետիկայի և բջջաբանության» ամբիոնների վարիչները, պատմության ֆակուլտետի «Հնագիտության» ամբիոնի վարիչը, երկու գինեգործական կազմակերպությունների 1-ական մասնագետ, մեկական գիտաշխատող՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության, Բուսաբանության ինստիտուտներից, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնից, ՀՀ Արդարադատության նախարարության կրիմինալիստիկայի փորձագիտական կենտրոնի 1 փորձագետ, Կենսաբանության ֆակուլտետի 1 ուսանող:

3.3.5. Խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է, որի ավարտից երեք ամիս առաջ Կենտրոնի տնօրենը ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի Խորհրդի նոր կազմը:

3.3.6. Մինչև Խորհրդի լիազորությունների ավարտը, վերջինիս կազմում, անհրաժեշտ փոփոխությունները (կապված խորհրդի անդամի՝ պաշտոնից ազատման, երկարատև գործուղման, լիազորությունների կատարման անհնարինության հետ) իրականացնում է ԵՊՀ ռեկտորը՝ Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ:

### **3.4. Խորհրդի իրավասությունները**

#### **3.4.1. Կենտրոնի Խորհուրդը՝**

- Ընտրում և պաշտոնանկ է անում Կենտրոնի տնօրենին:
- Լսում և հաստատում է Կենտրոնի գործունեության արդյունքների վերաբերյալ Կենտրոնի տնօրենի տարեկան հաշվետվությունը:
- Քննարկում և երաշխավորում է Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի մասնագրերը, առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները:
- Հաստատում է մագիստրոսական թեզերը:
- Քննարկում է և առաջարկում Կենտրոնի կրթական և գիտական գործունեության արդյունավետության ապահովման և բարձրացման ճանապարհները:
- Կազմակերպում է Կենտրոնի կողմից մշակված ուսումնամեթոդական, ուսումնագիտական ձեռնարկների գրախոսությունը և երաշխավորում դրանք:
- Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ քննարկում և հաստատում է Կենտրոնի ռազմավարությունը և գործունեության հիմնական ուղղությունները,
- Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ քննարկում և հաստատում է Կենտրոնի գործունեության տարեկան աշխատանքային ծրագիրը,

### **3.5. Կենտրոնի Խորհրդի աշխատակարգը**

- 3.5.1. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Կենտրոնի տնօրենը՝ առնվազն տարին երկու անգամ: Նիստ հրավիրվում է նաև Խորհրդի անդամների մեծամասնության առաջարկությամբ:
- 3.5.2. Խորհրդի նիստերը համարվում են իրավագոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ը:
- 3.5.3. Խորհրդի անդամները նիստի անցկացման տեղի ու ժամանակի մասին տեղեկացվում են նիստից առնվազն 3 օր առաջ: Քվորումի բացակայության դեպքում Խորհրդի անդամները տեղեկացվում են խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակի մասին:
- 3.5.4. Կենտրոնի տնօրենի ընտրության կապակցությամբ հրավիրված Խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:
- 3.5.5. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման օրը, ներկաների անունները, օրակարգի և քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են կենտրոնի տնօրենը և նիստի քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը պատշաճ կերպով կազմելու համար:

### **3.6. Կենտրոնի տնօրենի պաշտոնում թեկնածուների առաջադրումը, ընտրության և պաշտոնից ազատման կարգերը**

- 3.6.1. Կենտրոնի տնօրենի թեկնածու կարող է առաջադրվել կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող, վերջին 5 տարիների ընթացքում կենտրոնի նպատակներին և գործառույթներին առնչվող ոլորտներում գիտահետազոտական աշխատանքներում ակտիվորեն ներգրավված (ինչը հիմնավորվում է հրատարակումներով), ակադեմիական (դասախոսական և գիտական) աշխատանքի փորձ և համապատասխան մասնագիտական կարողություններ ու հմտություններ ունեցող անձը:

- 3.6.2. Կենտրոնի տնօրենի պաշտոնի համար թեկնածուների առաջադրումը և ընտրությունների անցկացումն իրականացվում է ԵՊՀ ֆակուլտետների դեկանների ընտրության համար ԵՊՀ-ում գործող ընթացակարգով:
- 3.6.3. Կենտրոնի տնօրենի ընտրությունը կատարվում է փակ գաղտնի քվեարկությամբ:
- 3.6.4. Կենտրոնի տնօրենն ընտրվում է հինգ տարի ժամկետով:
- 3.6.5. Ընտրությունների արդյունքների հիման վրա ԵՊՀ ռեկտորը Կենտրոնի տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:
- 3.6.6. Կենտրոնի տնօրենի ամենամյա հաշվետվությունը լսելու համար հրավիրված նիստում Խորհուրդը քվեարկությամբ ընդունում է տնօրենի հաշվետվությունը: Հաշվետվությունը չընդունելու պարագայում դրվում է Կենտրոնի տնօրենին անվստահություն հայտնելու հարցը, որի վերաբերյալ որոշումն ընդունվում է փակ գաղտնի քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեկ երկրորդով:
- 3.6.7. Տնօրենին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունելու դեպքում ԵՊՀ ռեկտորը լուծում է տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

### **3.7. Կենտրոնի տնօրենի լիազորությունները**

- 3.7.1. Կենտրոնի տնօրենը՝
- ապահովում է Կենտրոնի խորհրդի որոշումների կատարումը,
  - ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի հաստիքացուցակը և դրանով նախատեսված պաշտոններում նշանակման ենթակա անձանց թեկնածությունները,
  - Կենտրոնի խորհրդի նիստում հանդես է գալիս տարեկան հաշվետվությամբ,
  - կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի կանոնադրությամբ սահմանված բոլոր նպատակների և գործառույթների իրականացումը,
  - ղեկավարում է Կենտրոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերի մշակման աշխատանքները և վերահսկում է դրանց մատուցման որակը,
  - տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական և նյութական միջոցները,



- ներգրավում է Կենտրոնի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ մասնագետներին,
- ներկայացնում է Կենտրոնը համալսարանում և նրանից դուրս, Կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,
- լուծում է Կենտրոնի կանոնադրությունից բխող և կենտրոնի ուսումնասմեթոդական, գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր,
- արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են Կենտրոնի աշխատողների և սովորողների համար:

### **3.8. Կենտրոնի աշխատողները**

- 3.8.1. Կենտրոնի տնօրենին, նրա բացակայության ժամանակ, փոխարինում է Կենտրոնի աշխատողներից որևէ մեկը՝ Կենտրոնի տնօրենի հանձնարարությամբ:
- 3.8.2. Կենտրոնի առջև դրված խնդիրները լուծելու և գործառույթներն իրականացնելու համար Կենտրոնը պայմանագրային հիմունքներով կարող է ներգրավել նաև հաստիքացուցակով չնախատեսված այլ մասնագետներին:

## **4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**

### **ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

- 4.1. Կենտրոնի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են.
- 4.1.1. Կենտրոնին ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը,
- 4.1.2. Կենտրոնի կողմից իրականացվող գիտահետազոտական և կրթական գործունեության, վերապատրաստման դասընթացների, տեղեկատվական նյութերի պատրաստման և այլ վճարովի ծառայությունների մատուցումից գոյացած միջոցները,
- 4.1.3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պետական պատվերի, բազային և թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում հատկացված միջոցները,

- 4.1.4. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կատարված ներդրումները և նվիրատվությունները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,
- 4.1.5. Կենտրոնի գործունեության արդյունք համարվող մտավոր սեփականության իրավունքի և ստեղծագործական գործունեության արդյունքի վաճառքից գոյացած միջոցները,
- 4.1.6. Այլ միջոցներ, որոնք գոյանում են Կենտրոնի թույլատրված գործունեության տեսակներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 4.2. Սույն կանոնադրության 4.1. կետով նախատեսված ֆինանսական միջոցները կուտակվում են ԵՊՀ բանկային հաշվում՝ Կենտրոնի համար նախատեսված ենթահաշվում:

## 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Սույն կանոնադրության հաստատումից հետո՝ երկամսյա ժամկետում, Կենտրոնի տնօրենի պաշտոնակատարը ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի Խորհրդի կազմը:
- 5.2. Կենտրոնի Խորհուրդն իր կազմավորման պահից երկամսյա ժամկետում ընտրում է Կենտրոնի տնօրեն սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: